

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ

araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 11, 26.09.2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 22.09.2022թ. որոշում (որոշում **ԲԺ0201-01/01Լ**) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ք.Երևան

Կող: ԲԺ0201-01/01L

Դաս: ՀՊ

«22» սեպտեմբերի 2022թ.

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21¹-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 10.2 կետի «ա» ենթակետը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 4-րդ կետի 4.1 ենթակետը փոփոխել և շարադրել բովանդակությամբ.
«4.1.Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 9,366,725,000 (ինը միլիարդ երեք հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 1,873,345 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր քառասունհինգ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
Բանկի հայտարարված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը սահմանված է 3,000,000 (երեք միլիոն) հատ բաժնետոմս:»:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

